

**3.2. Առևտրային բանկեր**

Ըստ ՀՀ Կենտրոնական բանկի նախնական տվյալների 2000թ. սեպտեմբերի վերջի դրությամբ գործող բանկերի (բանկային գործունեություն իրականացնելու արտոնություն ունեցող) քանակը 31 միավոր է, իսկ բանկերի մասնաճյուղերի ընդհանուր քանակը՝ 180:

Առևտրային բանկերի ընդհանուր ակտիվները 2000թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել են 235,1 մլրդ դրամ, իսկ ընդհանուր պարտավորությունները՝ 200,6 մլրդ. դրամ և հունվարի 1-ի դրությամբ աճել է համապատասխանաբար՝ 44,2 և 42,8 մլրդ. դրամով:

Առևտրային բանկերի ընդհանուր կապիտալը՝ հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 34,5 մլրդ. դրամ, որից կանոնադրական կապիտալը՝ 26,5 մլրդ. դրամ (ընդհանուր կապիտալի 76,8%), իսկ գլխավոր պահուստը՝ 3,8 մլրդ. դրամ և տարեսկզբի նկատմամբ աճել համապատասխանաբար՝ 1,5 մլրդ., 3,6 մլրդ. և 1,6 մլրդ. դրամով:

2000թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ առևտրային բանկերի ընդհանուր վնասը կազմել է 173,6 մլն. դրամ, ընդ որում շահույթով աշխատող 22 բանկերի շահույթը կազմել է 3060,6 մլն. դրամ, իսկ վնասով աշխատող 9 բանկերի վնասը՝ 3234,2 մլն. դրամ.

**Առևտրային բանկերի վարկային ներդրումների դինամիկան**

(մլն. դրամ)

	1999թ.	2000թ.					
	1.10	1.01	1.04	1.07	1.08	1.09	1.10
<b>Վարկային ներդրումներ<sup>2</sup>, ընդամենը</b>	71879	74397	80518	87838	87779	96552	94832
<i>այդ թվում՝</i>							
կարճաժամկետ	40563	41272	36588	42163	40691	39621	36166
<i>%-ով ընդամենը վարկային ներդրումների նկատմամբ</i>	56.4	55.5	45.4	48.0	46.4	41.0	38.1
երկարաժամկետ	31316	33125	43930	45675	47088	56931	58666
<i>%-ով ընդամենը վարկային ներդրումների նկատմամբ</i>	43.6	44.5	54.6	52.0	53.6	59.0	61.9
որից՝ վարկեր տարադրամով	58398	60630	68623	76794	76202	84419	82828
<i>այդ թվում՝</i>							
կարճաժամկետ	30054	32941	30740	37842	36671	35170	32771
<i>%-ով տարադրամով վարկերի նկատմամբ</i>	51.5	54.3	44.8	49.3	48.1	41.7	39.6
երկարաժամկետ	28344	27689	37883	38952	39531	49249	50057
<i>%-ով տարադրամով վարկերի նկատմամբ</i>	48.5	45.7	55.2	50.7	51.9	58.3	60.4

2000թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ երկարաձգված և ժամկետանց վարկերը կազմել են համապատասխանաբար՝ 13458 մլն. և 14023 մլն. դրամ: Տարեսկզբի նկատմամբ երկարաձգված վարկերը աճել են 4907 մլն. դրամով կամ 57,4%-ով, իսկ ժամկետանց վարկերը համապատասխանաբար՝ 4093 մլն. դրամով կամ 41,2 %-ով, իսկ նախորդ ամսվա նկատմամբ երկարաձգված վարկերը աճել են 1626 մլն. դրամով, իսկ ժամկետանց վարկերը՝ 945 մլն. դրամով:

Բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների մնացորդը տարեսկզբի նկատմամբ աճել է 12513 մլն. դրամով կամ 40,8%-ով և 2000թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել՝ 43198 մլն. դրամ, իսկ սեպտեմբերի 1-ի նկատմամբ աճել է 1169 մլն. դրամով կամ 2,8%-ով:

Բանկային համակարգում սպասարկվող հաճախորդների քանակը 2000թ. սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել է 544542, որից ֆիզիկական անձինք՝ 474563, իսկ նրանց հաշիվների քանակը համապատասխանաբար՝ 370122 և 284133: Ընդ որում,

<sup>2</sup> Ընդգրկված չեն երկարաձգված և ժամկետանց վարկերը:

ճերառված չեն միացյալ հաշիվներում ընդգրկված հաճախորդները և վերջիններիս հաշիվների քանակը:

2000թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ բանկային համակարգում դրամարկղային շրջանառության մուտքերը կազմել են 308376,4 մլն. դրամ (սեպտեմբերին՝ 38778,2 մլն. դրամ), իսկ ծախսերը՝ 308995,2 մլն. դրամ (սեպտեմբերին՝ 39215,5 մլն. դրամ): Ծախսերը գերազանցել են մուտքերի գումարը 618,8 մլն. դրամով (սեպտեմբերին՝ 437,3 մլն. դրամով): 2000թ. հունվար-սեպտեմբերին արտարժույթի վաճառքից մուտքերը կազմել են 87931,2 մլն. դրամ (սեպտեմբերին՝ 10915,3 մլն. դրամ), իսկ արտարժույթ գնելու համար ծախսերը՝ 82182,5 մլն. դրամ (սեպտեմբերին՝ 8582,9 մլն. դրամ): Արտարժույթի վաճառքից մուտքերը գերազանցել են արտարժույթ գնելու համար ծախսերի գումարը 5748,7 մլն. դրամով (սեպտեմբերին՝ 2332,4 մլն. դրամով):